# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ Ք. ԿԱՏՈՎԻՑԵՈՒՄ (ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը**

Հարություն Սարգսյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Լեհաստանի Հանրապետություն, ք. Կատովիցե, 9-ից 14-ը, սեպտեմբերի 2024 թվական

**4. Հրավիրող կողմը**

Կատովիցեի Սիլեսիայի համալսարան, «Երիտասարդ գիտնականների համար ԵՄ մրցույթը (EUCYS)»

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Հայկական համադպրոցական գիտության փառատոնի մրցանակակիր աշակերտների ուղեկցում «Եվրոպական միության երիտասարդ գիտնականների 35-րդ մրցույթին» (EUCYS)

**6. Քննարկված թեմաները**

Այցի շրջանակում հանդիպել եմ երիտասարդ գիտնականների համար ԵՄ մրցույթի ղեկավար Քարեն Սլավինին: Քննարկվել են ընթացիկ աշխատանքային հարցեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությունը 2025 թվականին Ռիգա քաղաքում (Լատվիայի Հանրապետություն) կայանալիք «Եվրոպական միության երիտասարդ գիտնականների 36-րդ» (EUCYS) մրցույթին: Հանդիպել եմ նաև ISEF մրցույթի միջազգային բաժնի համակարգող Շերոն Սնայդերին, քննարկել եմ նաև 2025 թվականին ԱՄՆ-ում կայանալիք մրցույթին մասնակցության, գրանցման առնչվող հարցեր:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Մասնակցել եմ երիտասարդ գիտնականների համար ԵՄ մրցույթի շրջանակում կազմակերպված ազգային կազմակերպիչների աշխատաժողովին:

Աշխատաժողովի ժամանակ քննարկվել և հաստատվել է 2025 թվականի հայտերի՝ երկու փուլով ընդունելու հարցը, որը հնարավորություն կտա ազգային կազմակերպիչներին, ինչպես նաև մասնակիցներին առավել արդյունավետ կազմակերպել հայտերի ընդունման և քննարկման գործընթացները:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր**

Հայկական համադպրոցական գիտության փառատոնը ստացել է մասնակցության հրավեր Իռլանդիայի Հանրապետությունում կայանալիք գիտության ցուցահանդեսին, որի մասնակցության ծախսերը հրավիրող կողմը հոգում է մասամբ: Ստացվել է նաև հրավեր՝ մասնակցելու «Թայվանի ճարտարագիտության և գիտության միջազգային մրցույթին», որի մասնակցության ծախսերը, բացի ճանապարհածախսից, հոգում է հրավիրող կողմը:

**9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հայաստանի Հանրապետության դպրոցականների շրջանում գիտության փառատոնին մասնակցությունն ակտիվացնելու, դպրոցներում հետազոտական բաղադրիչն ավելացնելու, միջազգային գիտության փառատոններին պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ուսուցիչների և աշակերտների շրջանում կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ, ներկայացնել Գիտության փառատոնի նպատակը, ընթացակարգը, մասնակցության պայմանները, մասնակիցներին ընձեռված հնարավորությունները: Միջազգային մրցույթներին մասնակցության և անդամակցության համար հնարավոր ֆինանսական աղբյուրների քննարկում և հստակեցում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը**

Հարություն Սարգսյան

20.09.2024թ.